ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2015թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱԻՍԱ ՀՐԱՆՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2797-րդ տարեդարձի առթիվ, ստեղծագործական ակնառու հաջողությունների, Երևան քաղաքի երաժշտարվեստում ներդրած նշանակալի ավանդի և բազմամյա վաստակի համար երգչուհի, ՀՀ ժողովրդական արտիստ Ռաիսա Հրանտի Մկրտչյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱԻՍԱ ՀՐԱՆՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռաիսա Հրանտի Մկրտչյանը ծնվել է 1942թ. փետրվարի 25-ին, Սևանում:

1948 թվականին տեղափոխվել է Երևան:

Ավարտել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը:

1963-1968թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժնում: Ուսմանը զուգահեռ երգել է երիտասարդական էստրադային նվագախմբերում՝ «Юность», «Կռունկ»:

1968 թվականից մինչ օրս հանդիսանում է հեռուստատեսության և ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի մեներգչուհի:

1965 թվականի երգի փառատոնում արժանացել է ոսկե մեդալի և դափնեկրի կոչման:

1967-1975թթ. եղել է Սոչիի, Մինսկի և Լեհաստանի Սոպոտ քաղաքի միջազգային երաժշտական մրցույթների դափնեկիր:

1977 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչման, 2001 թվականին՝ ՀՀ «Մովսես Խորենացի» շքանշանի, 2006 թվականին՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչման, 2008 թվականին՝ Մոսկվայի «Կարոտ» միջազգային հայկական փառատոնի ոսկե մեդալի, 2009 թվականին՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրի, 2011 թվականին՝ ՀՀ ԱԺ Պատվո մեդալի, 2012 թվականին՝ Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալի, ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալի, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի:

Ելնելով վերգրյալից և հաշվի առնելով Ռաիսա Մկրտչյանի ստեղծագործական գործունեությունը, բազմամյա վաստակը և երաժշտարվեստում ներդրած նշանակալի ավանդը՝ առաջարկվում է Ռաիսա Հրանտի Մկրտչյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԻՍԱ ՀՐԱՆՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաիսա Հրանտի Մկրտչյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԻՍԱ ՀՐԱՆՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաիսա Հրանտի Մկրտչյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ